Պաշտոնական ընդդիմախոսի

ԿԱՐԾԻՔ

Ռիտա Գեղամի Հովհաննիսյանի

«ՀՀ-ՈՒՄ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՊՈՐՏՖԵԼՆԵՐԻ

ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված

Ը.00.08 - «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ

տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի

հայցման համար

Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումներն ընդամենը 10 տարվա պատմություն ունեն, հետևաբար շատ կարևոր է պարբերաբար գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, որոնք թույլ կտան մանրամասն ուսումնասիրել դրանց վերաբերյալ օրենսդրական և գործնական բարեփոխումները և վեր հանել պոտենցիալ խնդիրները:

Ընդհանուր առմամբ աշխատանքը հաջողված է, քանի որ հեղինակը կարողացել է ներկայացնել ինչպես ՀՀ-ի, այնպես էլ տարբեր երկրների կենսաթոշակային համակարգերի առանձնահատկությունները և ձևավորման պատմությունը, տարբեր կողմերից փորձել է բացահայտել այն սահմանափակումները, որոնք կարող են խոչընդոտել ավելի բարձր եկամտաբերության ապահովումը կուտակային համակարգի մասնակիցների համար:

Ատենախոսության թեմայի արդիականությունը ակնհայտ է, իսկ ստացված արդյունքները կարող են ունենալ ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակություն և լայն կիրառություններ:

Աշխատանքը զուրկ չէ նաև թերություններից.

1. **Տեքստի շարադրման վերաբերյալ** ունեմ հետևյալ դիտողությունները՝

- Հետազոտության օբյեկտի և առարկայի ձևակերպման մեջ նշված է <<Հետազոտության առարկան կուտակային կենսաթոշակային համակարգն է, իսկ հետազոտության օբյեկտը՝ կուտակային կենսաթոշակային

համակարգի հիմնադրամների ակտիվների կառավարումն է և տնտեսության զարգացման ներկա փուլում ակտիվների պորտֆելների կառուցման ու կառավարման առանձնահատկությունները, ինչպես նաև ներդրումային դաշտի զարգացման հեռանկարները:>>: Կարծում եմ պետք է լինի հակառակը, մասնավորապես՝ հետազոտության օբյեկտը կուտակային կենսաթոշակային համակարգն է, իսկ առարկան՝ կուտակային կենսաթոշակային համակարգի հիմնադրամների ակտիվների կառավարումն է և տնտեսության զարգացման ներկա փուլում ակտիվների պորտֆելների կառուցման ու կառավարման առանձնահատկությունները, ինչպես նաև ներդրումային դաշտի զարգացման հեռանկարները: (էջ 5)

- Կարծում եմ՝ գիտական նորույթ 4-ը կարելի է ավելի հաջող ձևակերպել: Միգուցե նույնիսկ այն պետք է մաս կազմի գիտական նորույթ 3-ի:

2. **Կառուցվածքային առումով** աշխատանքը հաջող է կազմակերպված: Կարծում եմ՝ <<Եզրակացություններ և առաջարկություններ>> բաժնից կարելի է հեռացնել այն հատվածը, որտեղ նշվում է գիտական նորույթի մասին, քանի որ դա ամբողջությամբ ներածությունում համապատասխան հատվածի կրկնությունն է (էջ 103):

3. **Բովանդակային առումով** ունեմ հետևյալ դիտողությունները և առաջարկությունները՝

- Հեղինակը ենթագլուխ 3.2-ում բավականին մանրամասն ներկայացրել է ՀՀ-ում պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման տեղաբաշխվածությունը և ֆոնդերի եկամտաբերությունը: Կարծում եմ՝ աշխատանքը կշահեր, եթե ներկայացվեր, թե ֆոնդերի ստեղծման պահից ի վեր ինչպես է փոխվել այդ ֆոնդերում ակտիվների տեղաբաշխվածությունը, օրինակ՝ արդյոք ֆոնդերի կառավարիչները ավելի ռիսկային հավասարակշռված ֆոնդում ավելի շատ են ներառել բաժնետոմսեր վերջին շրջանում, թե ոչ:
- Գիտական նորույթ 3-ում հեղինակը նշում է՝ <<Առաջարկվել է Բլեք-Լիթերմանի մոդելում որպես փորձագետների դիտարկումներ օգտագործել համապատասխան նորությունների սենտիմենտը: Իսկ վստահության ցուցանիշի փոխարեն օգտագործել ինֆորմատիվության ցուցանիշը: Ցույց է տրվել, որ այս մոտեցմամբ նույն ռիսկայնության մակարդակում կարելի է ստանալ 3% բարձր եկամտաբերություն՝ հաշվի առնելով ՀՀ կուտակային կենսաթոշակային սահմանափակումները>>: Հավանաբար, հեղինակը հղվում է 3.5 ենթագլխում նկարագրված մոդելներին, սակայն այդ ենթագլխում չի նշվում վերոնշյալ 3% բարձր եկամտաբերության մասին: Ընդհանուր առմամբ, կարծում եմ 3.5 ենթագլխում մոդելների նկարագրությունը կարելի է ավելի մանրամասն ներկայացնել: Մասնավորապես՝
    - Աղյուսակ 11-ում ներկայացված են սենտիմենտ միավորներ, սակայն ներկայացված չէ, թե ինչպես են դրանք հաշվարկվել, օրինակ՝ QQQ-ի

ինդեքսի համար հաշվարկվել է -0.13 միավոր: Ցանկալի կլիներ ավելի մանրամասն ներկայացվեր, թե դա ինչ է նշանակում, արդյոք դա ինչ-որ օրվա նորությունների սենտիմենտ միավորն է, թե ամբողջ ժամանակահատվածի միջինը կամ միգուցե ուրիշ նշանակություն ունի:

- Գծապատկեր 29-ում նշված չէ, թե ուղղահայաց առանցքը իրենից ինչ է ներկայացնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Ռիտա Գեղամի Հովհաննիսյանի ատենախոսությունը արդիական է և ունի գիտագործնական նշանակություն:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, իսկ հրապարակված 9 հոդվածներում ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ռիտա Գեղամի Հովհաննիսյանի «ՀՀ-ում կենսաթոշակային հիմնադրամների պորտֆելների կառուցման առանձնահատկությունները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությունների ներկայացման պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Տնտեսագիտության թեկնածու՝
Գ.Ռ. Չախոյան